ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/1146 « 19 » 11 2020 թ.

Ձեր

Մաքսիմիլիան Գրուպ ՍՊԸ (ՀՎՀՀ 00195768)
ք.Երևան, Կոմիտաս 8/11
էլ. հասցե՝ maximiliangroupcom@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և ''Մաքսիմիլիան Գրուպ'' ՍՊԸ-ի միջև 27 դեկտեմբերի 2019թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ''Մաքսիմիլիան Գրուպ'' ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ծառայության մատուցման ժամկետը խախտվել է::

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ

կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և ''Մաքսիմիլիան Գրուպ'' ՍՊԸ-ի միջև 27,12,2019թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ-2020/ԿԱՊ/2 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

''Մաքսիմիլիան Գրուպ'' ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Ինեկոբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝
Պետ, ոստիկանության գնդապետ ***Ա.Ներսիսյան***

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 50-39